

Օ(Գ. 325)

9-47

# ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՐՈՂՐԴԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐ.

ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. Ա. ԱՏՈՒԱԾՍԵՆՉԻ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՔԵՐԻ Ա. Ա. ԶԻՆ ՀԱՅ  
ԹԱՐԴՄԱՆՈՎ, Ա. ԱՊՐԱԿԱՆ Ա. Ա. ԶԻՆ ԲՆԱԳՐԻՑ — Թ. Ա. ՐԳՈՒՄԻՑ.

Օգոստ

1631

ԳՐԵՑ

Ա. ԷջՄԻԱԾՆԻ ՄԻԱԲԱՆ

Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան (Ճուղութեանց)

Վաղարշապատցի:

— — — — —

Վաղարշապատ  
Տպարան Մայր Աքոռոյ Մրբոյ Էջմիածնի  
1908

22



## ԷՆԹԵՐՅՈՂԻՆ

Այն գժբախտ օրերից, երբ Հային վիճակուեց իւր սեպհական հայրենիքումն իսկ օտար համարուել, և այնուհետեւ ցայսօր հետզհետէ մեծ ու փոքր հատուածներով ցրուիլ աշխարհի ամեն անկիւն, մեղ մնում էր անցեալի, հայրենիքի, և միմեանց հետ կապը պահող, որով և ազգային մի-ամբողջութեան յուշարձան՝ երկու մեծ Սրբութիւններ—Հայոց պատմութիւնը և Ս. Էջմիածինը. Սեպհական լեզուն և կրօնը առաւել ևս զօրեղ կառ են, ինչ կարծիք, սակայն սորանք չէ որ պայմանական են, և կարող են ցրիւ եկած անտէր անտիրական ազգայնոց կապը պահել՝ որչափ իրենք էլ կապուած կը մնան և ոդի կառնուն առաջիններից, ինչպէս ծառը արմատից—հողից:

Բայց մենք ինքնասպան ազգ ենք, հաւաստի շատ ապացոյցներ կան դորա, նատ է անցել այն օրից՝ երբ ամենայն Հայոց Ս. Էջմիածինը կեղծիք—նոր Էջմիածին յայտարարելու կործանիչ ջանքերը խրախուսում էր և՛ հէնց ինքը Էջմիածնի Հայոց Հայրապետը. «իսկական» Էջմիածինը վերաշնելու անունով խաչագողական ժողովարարութիւն թոյլ տալը. երբ արտունջը և գրաւոր բողոքը ծանրացաւ, նա, առանց քաշուելու, այլև սրտմտած՝ ասաց Միաբանութեան երեսին—«Խաչիկ կը ան է Էջմիածինը, դուք կ'ըսէք՝ աս. ես ալ կ'ըսեմ» ։ և ան է և և ան ։ Իսկ երբ (1904—5) լոյս տեսաւ իմ՝ «Վահարշապար» և Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են» (Հայ—ռուս.) շարադրութիւնը, նա գժգոհ մնաց հէնց այնպէս՝ ինչպէս Խաչիկը, «Մշակը», «Նոր Վրեմյա» և . . . Բայց գոնէ խափանուեց արշաւանքը և գայթակղութիւնը:

Ազգային միւս մեծ Սրբութիւնը, մեր տոհմային պատմութիւնը, Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը, մեր օրերում ենթարկուեց, —քննադատութեան անունով,—խիստ յարձակման. նորա հեղինակին համարեցին իւր անձնաւորութիւնը, պատմածները, և յատկապէս գրելու ժամանակը՝ կ'ոչո՞ս խոբէնայ. Քանի քանի անգամ Վիեննայի Միհթարեանց գիտական ամսագիր «Հանդէս ամսօրեայի Էջերում ցեխ շպրտեցին, «. . . Խորենացի» կոչեցին անմահանուն սուրբ Ծերունուն. քրքջում էին առհասարակ: —Մի անգամ, Խորենացու Հայոց պատմութեան զանազան տպագիրներ էի խնդրում ձեմարանի մատենադարանում, լսարանցի երկու—երեք տղայք պտրում էին. յանկարծ ներս մտաւ Տեսուչը, և երբ իմացաւ թէ ինչ եմ ուզում, պատասխանեց. «Խորենացու քարն արդէն հորն ընկաւ, էլ աւելորդ է նորա մասին մտածելը»:

—Այդպէս հեշտ չենք կարող հրաժարուել Խորենացուց, մանաւանդ որ միւս պատմագիրները նորա վերայ են հիմնուել: Ուրեմն մենք պատմութիւն չունինք . . . —ինչու չունինք, Ագաթանգեղոս, Կորիւն, Ղաղար Փարպեցի:

Ես խնայեցի Տեսին աշակերտների ներկայութեան, և լոեցի. նա գնաց. Ապա ասացի այն աշակերտներին. «Դուք կարդացել և գիտէք անշուշտ Ագաթանգեղոս, Կորիւն և Ղաղար Փարպեցի, այնտեղ Հայոց պատմութիւն կայ ։ — Ու. .

Ստէք, խլէք Հայից նորա տոհմային դիւցազնական պատմութիւնը, ինչպէս հասկացել խլում է Թուրքը. նորա լեզուն. նորա «Աստուածակառոյց» Էջմիածինը. նորա Ս. Լուսաւորիչը. նորա «Լոյս հաւատը» և «Հն հանակ Մեռունը». նորա հայ-

րենիքը՝ հօ վազուց է խլուած։ Փոքր մի ևս, խելօք Հայեր, էլ մեզ չսիրողներին անելու բան գրեթէ չի մնայ. վազուց այսպէս է Հայութիւնը պայմանաւորուած, հանգամանքների դասաւորութեամբ։

Կայ մի ուրիշ ազգ, որի տոհմային պատմութիւնը միտումնաւոր կամ ակամայ սխալներով ու առասպելներով զուգուած չլինի։ Ո՞ր դպրոցականը երկիւղածութեամբ չի սովորել և պատմել Հրէից Աստուածապահ ազգի պատմութիւնը . . . Յունական առասպելներին՝ հօ ամենքը սիրահար են։

Հիները գիտակցելով սովորեցնում էին ինքնայարգութիւն. — Բիբլիական դրախտը՝ Հայաստանումն էր. — Նոյի իջած և մշակած երկիրը՝ հօ Հայոց Միջնաշխարհ Այրարատն է. — Հայկի, նոյն և նոյի լեզուն՝ Աստուածախօսն է. — Բարելական աշտարակից յետոյ մարդկային հօտի վերայ աստուածացող բռնաւոր ներբովթայ դէմ միակ ընդվզող և նորան կործանողը՝ ազատասէր և բարեպաշտ Հայկ և Հայկազուններն էին. — Հայրենիքի սահմանները ոտնակոխ առնել համարձակող նիւքար Մագէսին՝ Արմաւրի աշտարակի բարձրից գամեց « հայրենասէր » Արամը. — Դաւ նիւթող « նենգաւոր » Աժդահակին՝ « շամփրեց » Արամազդ. մեր Տիգրանը. — Երկինքը, երկիրը և ծիրանի ծովը երկնեցին և ծնան մեր « վիշապաքաղ » Վահագնին. նա հուր հեր ունէր և արեգակ աչքեր. նա կուռել է վիշապների հետ և յաղթել. Հերակլեայ քաջագործութեանց նման բաներ էին նորա մասին հնումը պատմում հայ վիպասանները. Խորենացին իւր ականջով լսել է սորանք բամբիռով երգելիս. — Տորքը՝ քաջ և ուժեղագոյն էր Պարսից Սագճիկից, Հրէից Սամփառնից և Յունաց Հերակլէսից. — Արայ Գեղեցիկը՝ ողջախոհութեան մեծ զոհ բերեց քան Յովսէփ Գեղեցիկը. — Առաջին քրիստոնեայ ազգը, այլ և քրիստոնէութեան դէմ կոիւ մղող Մաքսիմինոս Դայային և նորա Հռովմէական լեգէօններին գիւմագող ջարդողը՝ Հայն էր. — Հայոց Մայր Եկեղեցիկը՝ ողջախոհութեան մեծ զոհ բերեց իջել ցոյց է տուել Յիսուս Միածինը, ոսկի ուռամբ հարուածելով հին մոլորութիւնը. — Ուրմզդական հուրը, որ սպառնում էր փոռնկել և ճարակել քրիստոնեայ աշխարհը՝ հայ կանայքը հանգցրին. — Նիկիական անխառն ճշմարիտ հաւատը՝ մէտ հաւատն է . . . Եւ սորանք այսպէս վիպելու և երգելու մեր իրաւունքը չեն ժխտում պատմութիւնը և աւանդութիւնը. Իսկ ինչումն է վնասը. Սակայն ուռչում են դպրոցական տպաւորուող կուրծքերը, սովորում են ինքնայարգութիւն. — Եպիհակնը այլեւ չշլանալ օտարի խարուսիկ հրապոյրներով. Մնապարծ լինելու երկիւղ չկայ. Բայց, տակաւին անապատի խորքում, մտածում էք հրաժարուել Եհովայից. նախ կանգնեցրէք գոնէ հորթ . . . մի բան՝ որի շուրջը խմբուէիք.

Խորենացու Հայոց պատմութեան մէջ թերութիւն և սպրդած սխալներ պատահելով հանգերձ, ունի նա աննման առաւելութիւններ. այդ չեն ուրանում՝ գնահատել գիտեցողները. Բայց նորա գրութեան ժամանակի խնդիրը՝ վտանգուած էր, տարուած էին համարում, « բարը հորն ընկած » :

Ահա ժամանակն այդ խնդիրը ի նպաստ Մովսէս Խորենացու վճռելուն է ծառայում ներկայ շարադրութիւնս. — Երեք յօդուած, առաջին երկուքը արտատպւում են՝ բայց փաստերով ճոխացրուած և աւելի մշակուած, իսկ երրորդը՝ նոր է լոյս տեսնում։

Բարդուղիմէոս եպս. Գէորգիան (Ճուղուրեանց)։

## ԽՈՐԵՆԱՅԻՆ Ե. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՑ ՄՈՏԵՆԱԳԻՐ

ԽՈՐԵՆԱՅԻՆ Է ԱՍՏՈՒԱԾԱՇՆԶԻ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐԲԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ  
ԹԱՐԳՄԱՆՈՂԸ ԱՍՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՆԱԳՐԻՑ—ԹԱՐԳՈՒՄԻՑ.

### I.

Ներկայ 1905 թ. Յունվարի 29-ին  
միայն առաջին անգամ ձեռքս անցաւ  
պրօֆ. Դր. Խալաթեանցի հրատարակած՝  
«ԳԻՐՑ ՄՆԱՑՈՐԴԱՑ», ըստ հազոյն հայ  
թարգմանութեան. զառաջինն ած ի լոյս  
ըստ կրկեն օրինակաց, հանդերձ Բ.  
լուսազիր նմանատպութեամբ նոցին՝  
Դժիգոր Խալաթեանց. Մոսկուա, ՌՅԽԸ  
—1899»:

Այդ հրատարակութեան առթիւ  
յարգելի պրօֆէսուրը իւր Յառաջաբանի  
մէջ, էջ թ. ասում է. «Մեր նորագիւտ  
թարգմանութիւնը ամենայն հաւանա-  
կանութեամբ հայերէն լեզուի ամենա-  
հին՝ թէ չասենք՝ անդրտնիկ գրուածքնե-  
րից մէկն է ընդունուելու, որ հասել է  
մեր ձեռքը» եթէ անգամ տարակոյս  
ծագի Երուսաղէմեան օրինակի Մնա-  
ցորդաց Գրքերի վերջում՝ դրած յիշա-  
տակարանի վաւերականութեան մասին  
Մեծ Թարգմանիչ Սահակ Կաթողիկոսի  
անձնաւորութեան վերաբերմամբ, որ՝  
ինչպէս ասած է, «զՄնացորդս յետոյ  
ամենայն մարդարէից է թարգմանեալ  
(Տեառն Սահակա Կաթողիկոսի)», — այ-  
նու ամենայնիւ անկասկած խորին հնու-  
թեան դրոշմ ենք նկատում այս թարգ-  
մանութեան վերայ. և այդ հնութեան

մէջն է արդէն նորա առաջնակարգ կա-  
րեսորութիւնը <sup>(1)</sup>, — կարծում է որ այդ  
թարգմանութիւնը՝ Ասորական բնագրից  
առաջին հայ թարգմանութեան՝ մինչեւ  
ցայսօր անյայտութեան մէջ պահուած  
մի խոշոր բեկորն է, որպիսի թարգմա-  
նութեան մասին յիշում է Մեծ Թարգ-  
մանիչների աշակերտ Կորիւն <sup>(2)</sup>: Բայց  
որովհետեւ ներկայ Ասորերէնից, — որպէս  
Եօթանասնից թարգմանութիւնից, —  
աարբերում է և աւելի մօտենում  
Երրայական բնագրին, ուստի ենթա-  
գրում է՝ որ այս նորագիւտ հայ թարգ-  
մանութիւնը արուած պիտի լինի Ասո-  
րական կորած առաջին բնագրից, որը  
կոչում էր Թարգում. իսկ վերջինս  
թարգմանուած էր ուղղակի Երրայական  
բնագրից՝ անմիջնորդաբար:

Ինձ յայտնի չէ թէ ուրիշներ ինչ-  
պէս ընդունեցին պ. Դր. Խալաթեանցի  
այդ կարծիք և ենթագրութիւնները,  
կամ թէ ուրիշ ինչ նոր կարծիքներ  
յայտնուեցին նոյն թարգմանութեան  
առթիւ. բայց ես պիտի գամ ահա  
նորա այդ վարկումները աւելի ևս հա-  
ւանելի կացուցանելուց զատ՝ ապացու-  
ցանել, — թէպէտ հակառակ իւր շատ  
տարիների ճգանց՝ բայց և յուրախու-

1. «Ինքն (Մեսրովը) դառնայ ի չայս. և դտանէ զմեծն Սահակ թարգմանութեան պարապեալ յԱսորւոյն՝  
ոչ լինելոյ Յունի» (Խոր. գ. ԵՊ.):

2. Եւ Խորենացին յիշում է. տես գ. ԵՊ. ԵՊ. ԿԱ:

թիւն միանդամայն,—որ Խորենացին է Մնացորդաց Գրքերի այդ առաջին հայ թարգմանողը Ասորերէնից։

Դէպքով, գրքի դիրքը դիտելու համար միայն պէտք եղաւ ինձ ստանալ ձեմարանի մատենադարանից. բայց և Յառաջաբանը կարդալուց յետոյ՝ տեղական ուշադրութեամբ աչքից անցրի, ապա մի քանի կտոր համեմատեցի և տեսայ, ճշմարիտ, որ այս գրքերը միանդամայն տարբեր թարգմանութիւն է մեր Եօթանասնից կոչուած հայ թարգմանութիւնից։ Հետաքրքրուեցի կարդալ ծայրէ ի ծայր, ինձ թւում էր թէ մեր պատմահայր Խորենացին է ինձ հետ խօսում։ Այդ նմանութեան պատճառ՝ սկզբում կարծեցի թէ նախնական պատերազմներին կարագիրներն էին։ Սիրեցի երկրորդ և երրորդ անգամ կարդալ, — կարդացի և՛ ըստ Եօթանասնից թարգմանութիւնը, — որով աւելի և աւելի համոզուեցի Խորենացուն գտած լինել։

Ամենքից շատ ինքը պլրօֆ. Գր. Խալաթեանցն է սիրում Խորենացու Հայոց պատմութեան աղբիւրները ցոյց տալու՝ հետեաբար և՛ նորա ապրած ժամանակի խնդիրը լուծելու համար՝ այստեղից—այնտեղից բառեր, փոքրիկ նախադասութիւններ յաջող կամ անյաջող կերպով քաղել և ցուցադրել։ Այս մեթօդը ընդունուած է առհասարակ. այս մեթօդով է իւր եղրակացութեան համանում և՛ նորայր Ն. Բիւղանդացին՝ իւր «Կորիւն վարդապետ եւ նորին թարգմանութիւնը» բազմահմուտ հետազոտութեան մէջ։ Այդ ուղղութեամբ մի փորձ էլ մնում է ահա ինձ անել, ցոյց տալու համար Խորենացու Հայոց պատմութեան և այդ Մնացորդաց Գրքերի Ասորերէնից առաջին հայ թարգմանութեան խնամութիւնը, այն՝ որ վրիպել է, զարմանք, պլրօփէսսօր Խալաթեանցի

ուշադրութիւնից՝ այդ հրատարակութեան նորա երկար աշխատանքների ընթացքում, ինչպէս և՛ նորան աշխատակցող «գիտնականների» ուշադրութիւնից։ Բայց ես չեմ բաւականանայ միայն ընդունուած մեթօդով—բառեր, գարձուածքներ քաղել ցուցադրելով, այլև կը լուսաբանեմ Խորենացու մինչեւ ցայսօր լաւ չհասկացուած մի խոշոր պարբերութիւնը ես, որով և մատնացոյց արածս փաստերը իրենք կը պսակեն իմ զեղուն յուսով այս փորձը։ Որքան երջանիկ փորձ, յաջողութեան դէպքում. որի չնորհիւ այսուհետեւ պիտի ստանան իրենց լուծումը շատ և շատ խնդիրներ։

Ա. Ասորերէնից թարգմանուած այս Մնացորդաց Գրքերում աչքի ընկնելու չափ սովորական են հայկական էան և էանց հայրանուան և ազգանուան գործածութիւնը, այն ինչ՝ Եօթանասնից կոչուած թարգմանութեան մէջ՝ խիստ հազուադէսլ են։ Օրինակ—«Ափատի յԱրիտանէանցն... Մանասէան գնդին... Ողդիա Տոփատէանց Դոդոնիէլէանց... Սափատիա Մաքատէանց... Սարիա Կամուէանց... Ամբրի Միքայելէանց... Իսամիա Արդէանց... Յերիմութ Ողիէլէանց... Ուսի Էրգէանց... Յագայ Զաքարէանց... Յասիէլ Արենէանց... Ողիէի Յերովամէանց...» (ա. Մնաց. Պ. 3: Զ. 61, իլ. 15—22)։

Եօթանասնիցը—«Սափատիաս՝ Յարիտաղայ... ցեղին Մանասէի... Քաղդայի ի նետուփատայ, որդի Գոթոնիէլի... Սափատիաս որդի Մակրեայ... Ասաբիա որդի Սամուէլի... Ամարիաս որդի Միքայէլի... Սամէաս որդի Արդիայ... Յերիմութ որդի Ողիէլի... Ովսեր որդի Ողիայ... Յագայի որդի Զաքարիայ... Ասիէլ որդի Արեններայ... Եղրիէլ որդի Յովրամայ» (անդ) <sup>1</sup>։

1. Հստ Եօթանասնից թարգմանութեան օրինակները բերում եմ Զահրաբեանի տպագրած Աստուածաշնչից։

Այսպէս՝ Մնացորդաց բովանդակ երկու Գրքերում:

Ո՞չ ապաքէն Խորենացն է յատուկ ևան, ևանց ածանցի այսպիսի յաճախութիւնը. — «ի Բիւռութեանն Սիրիզեայ... Յաբետոսթեանն Հայկ... Տիտանեանն Բելայ... Տիտանեանն Բէլ... արքայն Տիտանեան... Մանաւաղեան և Բղնունեաց... Սիսակեանցն... Արայշան Արայի... Արայշան Արայ... Երուանդեանն Տիգրան... ի Հայկազնեանն Տիգրանայ... Երուանդեանն Տիգրան... Առաւենեան+... զՄիսակեանն և զկադմեանն... զՄանաւաղեանն և զԲղնունեանն... զԱռաւենեանն և Զարեհաւանեանն» (Խոր. ա. Զ. Թ. Ժ. Ժ. Ի. Ի. Լ. Ա. բ. Դ. Բ.), և այլն, և այլն:

Բ. «Եւ որդիքն Խորայէլի ծննդագրեցան և կան ի ճափեանն նախառուսունեանն Խորայելացւոց և Յուդայ»: — «Եւ այլ բանք Յովսափատա, առաջինք և վերջինք, ահաւասիկ գրեալ են ի ճառա Յովհանայ Անանեանց, որ գրեաց ի ճառեանն նախառուսուն Խորայելացւոց» (ա. Մնաց. Թ. 1: բ. Մնաց. ի. 34):

Եւ սոյն թարգմանութեան միւս պատշաճ տեղերում (բ. Մնաց. Ժ. Զ. Ի. Ի. Ի. Ի. Ի. Լ. Բ.) կարգում ենք — «աւասիկ գրեալ են ի գիշու ճառեանց նախառուսուն»: կամ — «աւասիկ գրեալ են ի ճառա նախառուսուն»:

Եօթանասնիցը ունի — «Եւ ամենայն Խորայէլ ըստ թուոյն իւրեանց գրեալք սոքա ի գիշու նախառուսուն Խորայէլի» և Յուդայ»: — «Եւ մնացեալ բանքն Յովսափատու առաջինք և վերջինք՝ ահա գրեալ են ի բանս Յէուայ որդւոյ Անանայ, որ գրեաց աշխանց նախառուսուն Խորայէլի» (անդ, և միւս տեղերում): Եւ մի անգամ միայն ունի — «ահա գրեալ

են ի գիշու բանց նախառուսուն Յուդայ և Խորայէլի» (բ. Մնաց. ի. Բ.):

Եւ Թագաւորաց (գ. և գ.) գրքերի համապատասխան տեղերում Եօթանասնիցը 33 անգամ, անխտիր, ունի — «ի գիշու բանց առաջ նախառուսուն»<sup>1</sup>:

Այսպէս, Եօթանասնիցը, բոլոր տեղերում, ոչ մի անգամ չունի ճափեան նախառուսուց, կամ ճառա նախառուսուց. այն ինչ Խորենացուն յատուկ են ճափեան նախառուսուց, այլ և ճառա՝ պատմութիւն, գիրք, գլուխ նշանակութեամբք դործածուած իւր Հայոց պատմութեան մէջ. — «Ղհամբաւս հինու և զզրոյցս նախանականս յիւրեանց նախառուսուն... ճափեանն գրել»: — «Հրամայէ զբազում ճափեանն և զզրոյցս առաջնոցն այրել»: — «յամբարանոցս ճափենից նախառուսուն այսպէս արդեօք գտեալ»: — «ի բուն ճափեանն նախառուսուց կամ մեհենից»: — «Այսպիսիս ընթերցասիրիցեմք իմաստութեանն ճառա (պատմութիւն) և զրուցատրութիւնս, որք են Քաղդէացւոց և Ասորեստանեաց, Եգիպտացւոց և Ելլագացւոց»: — «Զորոց զանուանս յառաջնում ճառեն (գիրք) կարգեցաք»: — «ի բազում ճառա (գլուխ) կոտորեցաք»: Եւ այլն, և այլն: Տես օրին. Խոր. ա. Բ. Գ. Զ. Ժ. Ի. Լ. Բ. բ. Բ. Ժ. Ծ. Խ. Խորենացին «գիշու նախառուսուն» ևս դործ է ածում, տես օրին. բ. Բ.:

Գ. Երուսաղէմի օրինակը — «Խաւսել սկսաւ Շաւուղ ընդ պահետին իւրում և ասէ»: — «իրեւ ետես պահետն, թէ մեռաւ Շաւուղ»: — «Սեղէկ Ամանացի, Նուարա Բերովթացի, պահետին Յովաբու որդւոյ Շարուհեա» (ա. Մնաց. Ժ. 4, 5: ԺԱ. 39):

Էջմիածնի օրինակը — «Խաւսել սկսաւ Շաւուղ պահետին իւրում և ասէ»:

1. Տնս գ. Թագ. Ժ. 19, 29: Ժ. 7, 23, 31: Ժ. 5, 14, 20, 27: Ի. 39, 46: գ. Թագ. Ա. 18: Ը. 23, 34: Ժ. 19: Ժ. 8, 12: Ժ. 15, 18, 28: Ժ. 6, 11, 15, 21, 26, 31, 36: Ժ. 19: Ի. 20: Լ. 17, 25: Ժ. 28: Ի. 5:

« Իրբեւ ետես ու ինապէտն եթէ մեռաւ Շաւուղյու— « Նաաբար որդի Ագարեայ Սեղեկեմացի, նուարա Բերովթացի, ու նահիր+ Յովաբու որդոյ Շարուհեայ » (անդ) »

Եօթանասնիցը— « Եւ ասէ Սաւուղ շիապարհանին իւր » :— « Եւ ետես կապարհանիրն նորա թէ մեռաւ Շաւուղյու— « Սեղեկով Ամոնացի: Նաար Աքերոնացի՝ կապարհանիր Յովաբայ որդւոյ Շարուեայ » (անդ):

Իսկ Խորենացին— « Բարշամ առաջի ու ինակացն նորա պատահեալ՝ մեռաւ » :— « Հրամայեաց միում ի ու ինակացն կտրել զոտս նորա սրով » :— « մատուցեալ առարքայն հանդերձ բարեկամաւ իւրով Վարդանաւ ու ինակաց արքայի » :— « Եւ առաւել ևս գրգռէր զարքայ Վասակ ու ինակացն նորա » (Խոր. ա. ԺԴ. բ. ԼՂ. գ. ԻԲ. ԻԵ.):

Գիտելի է և այն, որ, ընդհակառակը, թէ Մնացորդաց Գրքերի այս Ասորականից թարգմանութիւնը և՛ թէ Խորենացին՝ բնաւ չունին կապարհանիր բառը Եւ, ու ինակիր՝ թէպէտ պատահում է և՛ Եօթանասնից թարգմանութեան մէջ, ինչպէս կը տեսնենք յաջորդ հատածի մէջ, սակայն ոչ այն մտքով, այլ՝ սոսկ ու զէնք=զէնք ունեցող նշանակութեամբ: Սոյն գիտողութիւններս ընթերցողը թող ի նկատի ունենայ և՛ բերուած յետագայ օրինակների համար:

Դ. « Արք հզաւրք, պատրաստեակը ի պատերազմ, նիւակառը+, և սպարաւորք » :— « Որդիք Յուղայ սպառազէնք, նիւակառը+ և սպարաւորք Զ. հազար և Պ. կուռ կառեալ » :— « Եւ ընդ նոսա գային սպարաւորք և նիւակառը+ ԼԵ. հազար » :— « Եւ եղեն արքայի զաւրք բազում սպառազէն կառեալ+, նիւակառը+ և վահանաւորք » (ա. Մնաց. ԺԲ. 8, 24, 34:)

բ. Մնաց. ԺԴ. 8):

Եօթանասնիցը— « Արք՝ որ հարկանէին պատերազմ. առեալ վահանս և աշտեայս » :— « Որդիք Յուղայ վահանաւորք և տիգաւորք, վեց հազար և ութ հարիւր զօրաւորք ի պատերազմի » :— « Եւ ընդ նոսա վահանաւորք և տիգաւորք երեսուն հազար » :— « Եւ եղեն Ասայի զօր ու ինակաց որք բառնային վահանս և նիզակս » (անդ):

Այսպէս, Եօթանասնիցը և ոչ մի անգամ չունի նիւակառը կամ կուռ կառերը:

Իսկ Խորենացին— « Եղբայր քո և նիւակառը » :— « զիումք կառելոյ ջոկատին . . . ընտրիւք և կառելով ոմամք . . . տեսեալ Հայկայ զԾիտանեանն կուռ կառեալ » :— « չորիւք բիւրովք կառելով հետեալօք . . . իտէգ նիզակի կառեալ » :— « Գովեմ զքաջահասակն զիմ և ու նիւակառը » :— « Նիւակառը և սուսերաւորք » :— « զփորձ առեալ զսաստկութեան սկային և կուռ կառեալ ժոյն » :— « զօրագլուխ նիւակառը լեալ անարի ոք սկայ կառեալ » (Խոր. ա. Թ. ԺԱ. ԻԴ. ԻԹ. ԻԹ. բ. է. ԶԲ. գ. Թ.):

Խորենացին այնքան է սիրում և գործածում նիւակառը որ իւր աստուածացը (Արամազդ) Տիգրանին գովելու համար՝ նիւակառը է կոչում. . .

Ե. « Հարկանէր վանէր Դաւիթ զԱսորիսն ի Ի. և Բ. հազարս այր պատերազմով և զաշիւալն ի հարին ի այսունիւնք. (ա. Մնաց. ԺԲ. 5):

Եօթանասնիցը— « Եհար Դաւիթ յԱսորեացն քսան և երկու հազարս արանց » (անդ): Զունի զաշիւալն ի հարին ի այսունիւնք գարձուածը և ոչ մի անգամ:

Իսկ Խորենացին— « զաշիւալն . . . ի ժամանյունիւն հարին ի այսունիւնք » :— « զՄԵծ մասն դաշտացն Ասորեստանի կալս-

1. Զինապես կամ զինակիր, զինակիր կամ զինակիր՝ մի և նոյն մտքով գործ են ածուած այս օրինակներում:

ի ծառայութեան հարկի աւ—«և զԴաղատացիսն հարեալ ընդ հարկի էաւոյշ և զթադառութիւնն ասիացւոց» (Խոր. ա. ԺԳ. ԺԴ. բ. Բ.)։

Զ. «Եւ Յովար որդի Շարուհեա սպառալեա նորա»—«Եւ իրեւ լուաւ Դաւիթ, առաքեացնա զՅովար սպառալեան»; —«և Սովաք սպառալեան Ադրազադարու առաջնորդ նոցա»; —«և զՍովաք սպառալեան՝ զաւրաց Ադրազադարու անդէն սպանանէր»; —«առ Յովար սպառալեան զաւրացն Դաւիթի զամենայն զաւրան . . . և հարկանէր վանէր Յովար սպառալեան Դաւիթ»; —«Ապա ետ պատասխանի Յովար սպառալեան և ասէ» (ա. Մնաց. ԺԲ. 15. ԺԹ. 8, 16, 18. ի 1. ԽԱ. 3)։

Եօթանասնիցը—«Եւ Յովար որդի Սարուհեայ ի վերայ զօրացն»; —«Լուաւ Դաւիթ, և առաքեաց զՅովար և զգունդ զօրաւորացն»; —«և զՍովփաք զօրավար զօրավար զօրացն Ադրազադարու առաջի նոցա»; —«և զՍովփաք զօրավար զօրուցն սպան»; —«աճ Յովար զամենայն զունդս զօրացն . . . և առ Յովար զՀուարաթ և կործանեաց զնա»; —«Եւ ասէ Յովար» (անդ)։ Չունի սպառալեան բառը և ոչ մի անդամ։

Իսկ Խորենացու Հայոց պատմութեան մէջ՝ սպառալեան բառը գործ է ածուած տասնեակներով։

Է. «Կոփել քարինս ՔԵՐՆԵՅ» (ա. Մնաց. իԲ. 2)։

Եօթանասնիցը—«Հատանել քարինս ՔԵՐՆԵՅ» (անդ)։

Իսկ Խորենացին—«Պաղատիոն ՔԵՐՆԵՅ» (Խոր. բ. 2Բ.)։

Ը. «Արդ առաքեցի . . . զԽիրամ

ժառայ իմ . . . այր իմաստուն հանճարեղ . . . ի գործ էաւ էավ ի քանդակել» (բ. Մնաց. Բ. 14)։

Եօթանասնիցը—ոչ միայն տարբերէ, ինչպէս միշտ, այլ և չունի—չգիտէ Հայոց նախապատմական վիպասանների էաւ էավ . . .

Իսկ Խորենացին—«Էւ էաւ էավ ըզդուոն Երուանդայ արքայի» (Խոր. բ. ԿԵ)։

Թ. «Անկանէին ամենայն ժողովուրդքն յերկիր ի վերայ երեսաց իւրեանց, ի վերայ էճապատրած ստլայանի յառական երկիրագանէին» (բ. Մնացորդաց, է. 3)։

Եօթանասնիցը—«Անկան ի վերայ երեսաց յերկիր ի քարայտակ տեղւոջն, և երկիր պագանէին» (անդ)։ Այսպէս են և աչքիս առաջ ունեցած Ֆրանսերէն երկու օրինակները—մին վուլգաթայից, իսկ միւսն Եօթանասնից՝ թարգմանութիւնք։

Իսկ Խորենացին—«յագակէւաց սպիտակ էճապատրած» (Խոր. բ. ԿԵ)։

Ժ. «Եւ էին Սողոմովսի քառասուն Ո. մատակ ձի էաւ և երիւարք կառաց Բ. հաղար» (բ. Մնաց. Թ. 25)։

Եօթանասնիցը—«Եւ էին Սողոմոնի չորք բեւրք մատակ ձիք ի կառս, և երկուտասան հաղար երիվարք» (անդ)։ Այսպէս է և դ. Թագ. Դ. 26. Ժ. 26 համապատասխան տեղերը։

Այսպէս, Եօթանասնիցը թէ տարբեր է և թէ չունի—չգիտէ էաւ բառը, բառ՝ որը նոյն նշանակութեամբ ուրիշ և ոչ մի տեղ մեր գրականութեան մէջ ինձ չի պատահել, բացի միայն Խորենացու մօտ.—«կարդէ . . . և զԳարաղ ոմն ի վերայ էաւ» (Խոր. բ. է.)<sup>1</sup>.

1. Յետոյ (1907) պատահեց ինձ կարդալ Կալիսթենէսկ՝ «Պատմութիւն Աղէքսանդրի Մակեդոնացւոյ» գիրքը. Վեն. 1842. նախնաց թարգմանութիւն. Այս գրքի մէջ մի քանի անդ պատմութեան, ընդ որս և՛ հետեւալը. «Եկեալ ածին Փիլիպոսի մատականը» ի կուտիցն ձի մի մեծ յոյժ, և ածին կացուցին առաջի այսպէս ասելով. Տէր արքայ, զայս ի կոյսն (երամակք) գտաք ծնեալ» (եթ, 16)։

Ժ. «Եւ ո՞համ առնուլ նոցա ծառ  
ույութեամբ երկրիս այսորիկ» (բ. Մնացորդաց ժ. Ժ. 8):

Եօթանասնիցը—«Եւ ժանիցէն զծառ  
ույութիւն իմ, և զծառայութիւն թագաւորութեան երկրիս» (անդ):

Այսպէս, Եօթանասնիցը թէ տարբերէ և՝ թէ չունի-չգիտէ ո՞համ առնուլ դարձուածը. բայց զոր Խորենացին գիտէ գործածել.—«Ոչ ճէրէլով ո՞համ պատերազմին Արշակայ» (Խոր. բ. Դ.):

Ժ. «Եւ այսն եկն ել պիղծ, եկաց առաջի Տեառն և ասէ. ես երթամ պատրել զնա» (բ. Մնաց. Ժ. 20):

Եօթանասնիցը—«Եւ ել հոչէն եկաց առաջի Տեառն և ասէ. ես խարեցից զնա» (անդ):

Իսկ Խորենացին—«Եւ այ. (ն), որ զովովեալ չարութիւն նիւթէր, ուսուցանէր նմա» (Խոր. «Ո՛ ինչ սակո Բիւրասպեայ հաւաստին»):

Ժ. «Այս հաստաբանութիւն, կորովի ձեռաւք իբրև զփորձ կամեցաւ առնել զանձին, նետ մի՞ջգեաց ի խուռն գնդին և եհար զարքայն» (բ. Մնաց. Ժ. 33):

Եօթանասնիցը—«Եւ այր ո՞մն ելից զաղեղն կորովութեամբ, և եհար զարքայն» (անդ). Զունի հաստաբանութիւն և ոչ մի տեղում:

Իսկ Խորենացին—«Այս Հայկ, գեղապատշաճ, անձնեայ, քաջագանգուր, խայտակն և հաստաբանութիւն» (Խոր. ա. Ժ.):

Ժ. «Եւ ի բաց կացին վաղվաղակի արք պատերազմին, որ ածէն ո՞դէրէն» (բ. Մնաց. Ի. 14):

Եօթանասնիցը—«Եւ թողին պատերազմօղքն զգերութիւնն» (անդ):

Իսկ Խորենացին—«Զամենայն միահամուռ ածէ ճէրէն սաստիկ յԱրտաշատ» (Խոր. բ. Մ.):

Ժ. «Թագաւորեաց փոխանակ նորա Ադադ. մեռաւ Ադադ, և եղեն այնուհետեւ առաջնորդութեամսա, առաջնորդ Ադուա, առաջնորդ Յեթէ, առաջնորդ Յեղիբամայ...» (ա. Մնաց. Ա. 50—54):

Եօթանասնիցը—«Թագաւորեաց փոխանակ նորա Ադադ... և մեռաւ Ադադ. Եւ այս են իշխանքէն Եղովմայ. իշխան Թամանայ. իշխան Դովզ'այ. իշխան Յեթեր. իշխան Եղիսակամաս...» (անդ): Այսպէս, Եօթանասնիցը թէ տարբերէ և՝ թէ չունի առաջնորդութիւն այն մտքով:

Իսկ Խորենացին—«Եցոյց հովիւ և առաջնորդ ժողովրդեանն»—«Քանզի ի բաժանել լեզուացն ընդ ամենայն երկիր, ոչ խառն ի խուռն և ոչ անառաջնորդ կամ անգլիսաւոր այս լինէր»—«Որպէս զի միւսանգամ տեսեալ զնոսա, առաջնորդ և իշխանս հանդերձ գեղեցիկ կարգօք հաստատեսցէ» (Խոր. ա. Դ. «Սակս Բիւրասպեայ հաւաստին» բ. Զ.):

Ժ. Խորենացին Բագրատունեաց մասին գրում է. «որպէս կոչէին յառաջքան զուրանալն՝ Բագադիա, (Տուրիա), Սեներիա, Ասուդ, Սափատիա, Վարագիա, Ենանոս» (Խոր. բ. Կ.):—Գարագաշեանը ասում է. «այդ անունները չկան բոլոր Հրէից գրոց մէջ, և ինչպէս կը կարծենք՝ Եբրայական չեն» (Քնն. պատմ. Հայոց. ա. մասն, Եր. 173):

Իմ նպատակից դուրս կը լինէր այստեղ ընդդիմախօսել Գարագաշեանին, այլ՝ ինձ պէտք է միայն «Սէնե+իս» անունը վերցնել՝ իբրև նիւթ. և հէնց այդ էլ բաւական կը լինի:—Ճշմարիտ որ «Հրէից բոլոր գրոց»—Եբրայական բնագրի և բուն Եօթանասնից թարգմանութեանց մէջ (ա. բ. գ. գ. թ. Թագ. և ա. բ. Մնաց.) չկայ Սէնե+իս անուննակայն Մնացորդաց Գրքերի Ասորականից այս նորագիւտ հայ թարգմանու-

թեան մէջ՝ չորս անգամ կայ Ալեքնիս  
անուն.—«Եւ որդիք Անանիա Փաղատի  
և Յեսէ որդի նորա, և Ալեքնիս որդի նո-  
րա, Եւ որդիք Ալեքնիս Սեմեայ . . .»—  
«Եւ Յովզափատ և Ասմաքիայ և Ալեքնիս  
և Թեսովնու—«և Բենիամին և Յեշով և  
Շեմիա և Ամարիայ և Ալեքնիս ի քա-  
ղաքան» (ա. Մնաց. Գ. 21—22, բ. Մնաց.  
ԱԱ. 13, 15).

Մխիթար աբբայի, Զոհրաբեանի և  
Կ. Պօլսոյ (1895) տպագրութիւնները ու-  
նին միայն առաջին, երկրորդ և չորրորդ  
տեղերում՝ Ալեքնիս կամ Ալեքնիս, իսկ  
երրորդ տեղում՝ բնաւ Բուն Եօթանաս-  
նիցը (Ֆրանսերէն) և Երայական բնագի-  
րը՝ Ալեքնիսյի տեղ ունին, գարձեալ միայն  
նոյն երեք տեղերում, Sécanja—Ալեքնիս:  
Ուրեմն Ալեքնիս, և չորս տեղում, մնացել  
է Ասորականից՝ առաջին հայ թարգմա-  
նութեան մէջ, որի ընտրելագոյն ներկա-  
յացուցիչն է պրօֆ. Խալաթեանցի այդ  
հրատարակած «Գիրք ՄՆԱՑՈՐԴԱՑ»:

Եւ Ալեքնիս, ըստ իս, յայտնի կա-  
նոնով փոխուել դարձել է Ալեքնիս. ինչ-  
պէս, օրին. մախլաս—մախլաս, ոչխար  
—ոխչար, և այլն<sup>1</sup>:

Ենթագրում եմ, որ Ալեքնիս կամ  
Ալեքնիս՝ դիտէր Խորենացին իւր՝ Ասորա-  
կան բնագրի այս թարգմանութիւնից:

Ահա, իմ ցուցադրած բառերը և  
մանր դարձուածները, մի կողմից՝ չունի  
Եօթանասնից թարգմանութիւնը, միւս  
կողմից՝ սորանք հասարակուց էն Ասորա-  
կան առաջին բնագրից այս հայ թարգ-  
մանութեան մէջն և Խորենացու Հայոց  
պատմութեան համար.

\* \* \*

Խոստացայ չբաւականանալ միայն  
բառեր, գարձուածներ քաղել ցուցա-  
դրելով:

Մեզ զբաղեցնող ներկայ հարցի հա-  
մար՝ Ծննդոց գրքում (Ժ. 2, 6, 24.  
ԺԱ. 10—13) գտնում ենք նոյի երեք  
որդոց ուղղագիծ ազգաբանութեան ա-  
նունների կարգը՝ այսպէս.—

ա) Սեմ, Արփաքսադ, Սաղա, Երեր . . .

բ) Քամ, Մեստրեմ:

գ) Յարեթ, Թիրաս:

Այսպէս է օտար ազգերի—թէ Եօ-  
թանասնիցը, թէ Վուլգաթան, նոյն է  
և Երայական բնագիրը: Հայկական  
տպագիրները՝ է որ համաձայն են սորան,  
և է որ տարբերում: Օրինակ, Մխիթար  
աբբայինը՝ համաձայն՝ Արփաքսադից յե-  
տոյ գնում է Սաղա:—Զոհրաբեանինը՝  
նոյնպէս համաձայն է, սակայն ծանօ-  
թագրում է. «Երկու օրինակը և եթ  
(Զեռագիրը) համաձայնք իրերաց յա-  
ւելուն աստանօր. Եւ Արփաքսադ ծնաւ  
կայինան, և կայինան Ճնու—զՍաղա . . .»:  
Իսկ Կ. Պօլսոյ (1895) տիպը՝ Արփաք-  
սադից յետոյ գնում է կայինան, ապա  
Սաղա. բայց ծանօթագրում է. «Յերբ.  
պակասի» (Կայինան):

Սակայն ա. Մնացորդաց Գլքում  
(Ա. 18, 24), այն էլ միմիայն Հայկա-  
կանում, Արփաքսադից յետոյ գալիս է  
կայինան, ապա Սաղա:—Մխիթար աբ-  
բայինը՝ առաջին տնահամարում ունի  
—«Արփաքսադ ծնաւ (կայինան. և կայի-  
նան Ճնու)՝ զՍաղա . . .»—փակագծում.  
Իսկ 24 տնահամարում՝ պակասում է  
կայինան, Արփաքսադից յետոյ դարձեալ  
գալիս է Սաղա:—Զոհրաբեանը՝ երկու  
տնահամարում ևս կայինան կդնելով հան-  
գերձ, վերջին տնահամարի մասին ծա-  
նօթագրում է. «յուժանս պահանձի կայինան»:

1. Զոհրաբեանը ա. Մնաց. Գ. 21 տնահամարի մասին ծանօթագրում է. «ոմանք, Արիա որդի նորա,  
Սենեկիա որդի նորա» . . .

— Կ. Պոլսոյ յիշեալ տպագրութիւնը ևս՝ երկու տնահամարումն էլ դնում է Կ. Այլնան, սակայն ծանօթագրում է. «Յերբ, պակասի»: Աչքիս առաջ ունեցած յիշեալ մրանսերէն օրինակները՝ թէ Ծննդոց և՛ թէ Մնացորդաց այդ տեղերում բնաւ չունին Կ. Այլնան:

Ուրեմն (Արփաքսադ ծնաւ) Կ. Այլնան, և Կայլնան ծնաւ՝ պահուած է միայն հայերէն մի քանի Զեռագիրներում, որոցից և անցել է տպագիրների մէջ այս կամ այն ձևով, ոչ միակերպ և ոչ բոլոր պահանջուած տեղերում: Եւ ահա երրայտական և եօթանասնից բնագիրներից՝ հայ թարգմանութեան և՛ այս տարբերութեան իբրև միակ աղջիւը՝ ներկայանում է բազմաշխատ պրօֆ, Գր. Խալաթեանցի իլոյս ընծայած այս «ԳԻՐԻ ՄՆԱՑՈՒԴԱՑ», որովհետեւ բացի որ սուրանում (ա. Մնաց. Ա. 18, 24) Արփաքսաթից յետոյ անշեղ գալիս է Կ. Այլնան, և ատք Սաղա<sup>1</sup>, այլև այդ արգէն ամբողջական տարբեր բնագրից և եզական թարգմանութիւն լինելու բոլոր առանձնայտկութիւններն ունի պահած:

Առանց բուն հարցից շեղուելու՝ հարկաւոր եմ համարում դիտել տալ, որ այս օրինակի յիշեալ 24 տնահամարը թէ տարբեր է (մեր) միւս օրինակներից և՛ թէ միակ ուղիղն է՝ Սեմայ սերնդոց ուղղագիծ աղգաբանութեան համար մինչև ցԱրքահամ:

Գուցէ առարկող լինի՝ թէ Կ. Այլնան կարող էր ուրիշ Զեռագրից իբրև վրիս պականցնել սորան, ինչպէս և՛ սորանից՝ ուրիշներ՝ թէպէտ թոյլ առարկութիւնն, որովհետեւ փաստը մնում է փաստ, այսուեւ ամենայնիւ կանխերով ասեմ, որ հազիւ յօդուածիս վերջին եզրակացութեան հասած՝ այդպիսի առարկութիւնը պիտի դառնայ անտեղի:

Խորենացին նոյի երեք որդոց սերնադոց ուղղագիծ աղգաբանութիւնը որդի ի հօրէ շարում է իւր Հայոց պատմութեան մէջ, իւրաքանչիւրինը ց11 պորտ, սակայն առնում է ոչ թէ ո. Գրքից, որը «զիւրան» — Սեմայ ցեղը վերցրել է, իսկ միւսները՝ եքել — թողել, այլ՝ «որպէս գտաք զհաւաստին ի հնոց պատմութեանց, մերով մասամբ ամենին անսուտ» (Խոր. ա. Ե.), Եւ դնում է այսպէս . . .

- ա) Սեմ, Արփաքսար, Կայնան, Սաղայ, Երեք . . .
- բ) Քամ, Քուչ, Մեստրեմ, Ներբովթ, Բար . . .
- գ) Յարեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ, Հայկ . . .

Խորենացին Քամայ և Յարեթի՝ իւր բերած այս աղգաբանութեան մէջ Բէլից (Ներբովթ) և Հայկից յետոյ եկողների համար վկայութիւն է բերում Արփենոսից, իսկ Յարեթի աղգաբանութեան համար՝ աղքիւր է ցոյց տալիս և՛ Մար Արքաս Կատինայի բերած Քաղդէական մատենի հեղինակ «Ժամանակագիրը», այսպէս, «Նինոս (որդի) Արքեղայ, Քայաղայ, Արքեղայ, Սնէերայ, Բէլայ, Նոյնպէս և զմերն ի Հայկայ մինև ցարայն . . . թուէ այսպէս, Արայն գեղեցիկ՝ Արամեայ, Հարմեայ, Գեղամեայ, Ամաեայ, Արամայիսեայ, Աշրամանեկայ, որ եզեւ հակառակ Բէլայ . . . Եւ զայս մեղ Արփեղինոս յիւրում առաջնում արձանականի ի մանր աղգաբանութեան ասէ»: — «Արդ ի նոյն մատենէ (Մար Արքասի) սկսեալ ասացից, Յապետոսթէ, Մերսոգ, Սիրաթ, Թակղադ, որ է Յարեթ, Գոմեր, Թիրաս, Թորգոմ . . . Հայկ, Արմենակ, և զայլսն ի կարգի» (Խոր. ա. Ե. Թ. տես և՛ ԺԲ.):

Խորենացու բերած այս աղգաբանութեան (Յարեթ, Գամեր, Թիրաս, Թորգոմ) մասին Գարագաշեանը, առանց արժանին ուշադրութեան՝ գրում է.

1. «Եւ Արփաքսար ծնաւ զեայիանան, և Կայիանան ծնաւ զեայզայ, և Զայզայ ծնաւ զերեք . . . : Որդիք զեմա. Արփաքսան, Կայիանան, Ջաղա, Երեք, Փաղեկ . . . » (անդ):

« Յայտնի է թէ այս ազգաբանութիւնը Ծննդոց է» (Քնն. պատմ. Հայոց. ա. մասն, եր. 133). — Այդ անունները յիրաւի կան Ծննդոց Դրբի մէջ, սակայն՝ ոչ նոյն կարգը ազգաբանութեան, այնտեղ Գամեր և Թիրաս եղբայրներ են, մինչ Խորենացու ցանկում՝ հայր և որդի...»

Խորենացին իւր քերած այդ ճիւղագրութիւնից անմիջապէս յետոյ գրում է. «Այդ զկայնան առաջին է նոյն ամենայնք ի ժամանակագրացն գրեն, և ի Սեմայ երրորդ։ Նոյնպէս և զԹիրաս առաջին է նոյն, իսկ Յարեթայ՝ երրորդ. թէպէտը մերում թարգմանութեան (Աստուածանչի) ոչ ուրեք ի բնագուի գտանի, իսկ զՄեստրայիմ առաջին է նոյն և երրորդ ի Քամայ՝ ոչ ի մերում թարգմանութեան և ոչ ի ժամանակագրաց ուրեք կարգեալ գտանեմք։ Այլ այսպէս զսակարգեալ գտաք ի յուշմագունէ ումեմնիէ և յընթերցասիրէ Ասորւոյ։ և հաւատարիմ թուեցաւ մեղ» (Խոր. ա. Ե.).

Կայնան «առաջին է նոյն» լինելու մասին Խորենացին վկայում է թէ՝ «ամենայնք ի ժամանակագրացն (և՛ ըստ մերում թարգմանութեան) գրեն»։ ուրեմն ակներև է՝ որ Խորենացու «թարգմանութեան» բնագիրը չէր ինչ որ է յայտնի Եօթանասնիցը, որը չունի զկայնան՝ առաջին է նոյն։ Բայց Թիրաս «առաջին է նոյն» չի գտնելում Խորենացու «թարգմանութեան» բնագրին՝ ոչ մի տեղում, ինչպէս չկայ նաև Եօթանասնից օրինակում, այլ միայն ժամանակագիրների մօտ։ իսկ Մեստրայիմ «առաջին է նոյն» յիրաւի չկայ ոչ «մեր թարգմանութեան մէջ»։ և ոչ որ և է ժամանակագրի մօտ նշանակուած, այլ որ առնուած է «մի ոմն յուշմագոյն և ընթերցասէր Ասորուց»։

Այսպէս, Խորենացին զկայնան, ըդ-

թիրաս, և զՄեստրայիմ «առաջին է նոյն» կարգելու համար՝ ազբիւր է ունեցել— առաջինի համար՝ ո. Դրբի՝ իրեն ծանօթ Ասորական առաջին բնագիրը—կորած թարգմանութիւնը, և ժամանակագիրներ, երկրորդի համար՝ միայն ժամանակագիրներ։ Իսկ երրորդի՝ Ասորին միայն Ասորին միայն կամար՝ զյուշմագոյն Ասորին միայն։ Այլ և, Խորենացին մի այլ տեղ (բ. ԿԲ.) գրելով. «ՅԱղամայ ՀԱՅՆԵՐՈՒԴ ԱՍՏԱՎՈՐ ՆԱՀԱՊԵՏ ՄԵՂ ՊԱՐԱՀԱՄ ԱՍՏՈՎԱԾԱՅԻՆ ԱՊԱՄՈՒԹԻՒՆՔՆ ԳՈՒցԱՆԵՆ»՝ —ոչ մի տարակոյս չի թողնում, որ այս և միւս տողերի գրելու ժամանակ Հայկական «թարգմանութեան բնագիրը» տակաւին չէր Յունական Եօթանասնիցը, և ոչ երբայականը, քանի որ ըստ այս վերջինների, այլ և ըստ Վուլգաթայի՝ Արբահամ ՀԱՅՆԵՐՈՒԴ ՆԱՀԱՊԵՏ է, պակասելով կայնան, և ոչ թէ «ՀԱՅՆԵՐՈՒԴ ԱՍՏՈՎԱԾԱՅԻՆ»։ Այս մի և նոյնը և՝ ապացոյց է՝ որ մեր ըստ Եօթանասնից թարգմանութիւնը (սրբագրութիւնը) կատարուած է մի այլ նախնական հայ թարգմանութեան հետևողութեամբ, որից առ այժմ գտնուած ամենամեծ մնացորդն է յիշեալ Զեռագիրներում պահուած Մնացորդաց երկու ամբողջ Դրբերը։

Եւ ի նկատի առնելով, որ նոյնպէս Ղուկաս Աւետարանիցը Քրիստոսի ըստ մարմոյ Ծննդաբանութեան մէջ Արփաքսագից յետոյ դնում է զկայնան, առաջին է նոյն, ապա Սաղա (Գ. 35—36), և որ Ղուկասը Ասորւց Անտիոքացի՝ հաւանականաբար Ասորի էր, և Ասորելին գրեց իւր Աւետարանը,—ակներև է թէ սորա ազբիւրը նոյնպէս չէր ինչ որ յայտնի Եօթանասնիցը, —հետևում է, անտա-

1. Խորենացու՝ յուշմագունէ ումեմնի և յընթերցասիրէ Ասորւց վերցրած լինելու մասին խօսքը՝ միայն Քամայ միւղի—յատկապէս Մեստրայիմի համար պիտի հասկանալ:

րակոյս, որ («Արփաքսաթ՝ ծնաւ») պայմանական, և կայինան ծնաւ՝ «—Ասորական հին ազբիւրից է ծագում»:

Եզրակացութիւն. ա) Պրօֆ. Գր. Խալաթեանցի իշխան ընձայած «Գիրք ՄնացՈՐԴԱՑ» ը «Հայերէն լեզուի ամենահին՝ թէ չասենք՝ անդրանին գրուածքներից մէկը պիտի ընդունել»: բ) «Թարգմանուած է, հաւանականաբար, Ասորական առաջին բնագրից — Թարգումից»: գ) «Արփաքսաթ ծնաւ պայմանական, և կայինան ծնաւ» պիտի ունենար Խորենացուն սկզբում ծանօթ բնագիրը — կորած թարգումը: դ) Խմ. քաղած և ցուցադրած բառերը, մանր դարձուածները և մտքերը՝ հաստիքնաց էն Մնացորդաց

Գրքերի մեջն այդ նորագիւտ հայ թարգմանութեան և Խորենացու Հայոց պատմութեան համար: ե) Հետեւաբար, Խորենացին է թարգմանել Մնացորդաց այդ Գրքերը Աստուածաշնչի Ասորական հին բնագրից՝ առաջին հայ թարգմանութեան ժամանակ, աշխատակցելով Մեծ Թարգմանիչներին — Ս. Սահակայ և Մեսրովայ, իբրև Սահակ Պարթևի «Քընչը և թարգմանութեան «արտադին» վարժ առաջադրյան աշակերտը: — «Բայց քանզի անզէտք էին մերում աղուեստի, ի բազում մասանց թերացեալ գործն գտանէր, վասնորոյ առեալ Մեծին Սահակայ և Մեսրովայ՝ (մեծընան) զմեզ առաքեցին յԱղէքսանդրիայ՝ ի լեզու պանծալի . . .» (Խոր. գ. ԿԱ.):

11. Փետրվարի 1905 թ.

## ԽՈՐԵՆԱՅԻՆ Ե. ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ՔԱՌՈՐԴԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐ

ԽՈՐԵՆԱՅԻՆ Է ԱՍՏՈՒՄՄԱՇՆՁԻ ՄՆԱՑՈՐԴԱՑ ԳՐՔԵՐԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՅ  
ԹԱՐԳՄԱՆՈՂԸ ԱՍՈՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ԲՆԱԳՐԻՑ—ԹԱՐԳՈՒՄԻՑ:

### II.

Այս վերնագրով առաջին յօդուածս  
անցած տարի լրյս տեսաւ լ«Տարազ» շա-  
բաթաթերթում (1905 թ. № 12,  
13), և Վենետիկի Մխիթարեանց «Բազ-  
մամբէպըում» (Սեպտեմբեր)։

Այդ յօդուածի գրելուս մոքովս  
անցնում էր, որ եթէ Խորենացու բժա-  
խնդիր դատախազները՝ յամառուել ու-  
ղեն, շատ-շատ՝ պիտի դառնան այժմ  
էլ ասեն թէ՝ հանդէս հանուած Մնա-  
ցորդաց Գրքերի թարգմանութիւնը յե-  
տին ժամանակի գործ է. այլ ևս ուրիշ  
ասելիք չեն կարող ունենալ Յօդուածի  
հրատարակուելուց յետոյ մեր հայր Եղիա  
վարդապետն ևս ուրախացած՝ նոյն կար-  
ծիքը յայտնեց<sup>1</sup>. Իսկ պ. Գր. Վանցեանը՝  
գրեց ինձ (22 Ապրելի 1905 թ.)—«Մե-  
ծաւ հաճութեամբ և խորին ուշադրու-  
թեամբ կարդացի Զեր գեղեցիկ յօդ-  
ուածը Տարազում... Փառք Աստուծոյ,  
որ գեռ կան անհատներ Խորենացու  
խկութիւնը ճանաչող, և աւելի ևս  
փառք, որ ահա գտնուում են փաստեր»

ուրիշներին էլ նոյնը ցոյց տալու. Զեր  
գրածները հերքելու համար հիմա պէտք  
է ցոյց տալ, որ Մնացորդաց Գիրքը աւե-  
լի յետին ժամանակի գործ է, այլապէս՝  
Խորենացու և Մնացորդաց Գրքերի ա-  
ռընչութիւնը անկասկած ելի է. այսինքն  
Խորենացին նա է, ինչ որ էր և եղել է,  
որին սակայն չէին ուզում ճանաչել...»<sup>2</sup>.

«Ուրիշ ասելիք չեն կարող ունենալ»:  
Խաբուած ենք:

Հ. Յ. Տաշեանը թէպէտ համոզուած  
շեշտում է՝ որ Մնացորդաց Գրքերի այդ-  
թարգմանութիւնը «յայտնապէս մնա-  
ցորդ մըն է ս. Գրոց նոյն իսկ նախնական  
թարգմանութենէն յԱսորւյն»:—Ուրեմն  
ոչ «յետին ժամանակի գործ»։ օրհնեալ է  
Աստուած։ Սակայն նա ուրիշ անսպա-  
սելի ապիկար բան է առարկում. «Բար-  
դուղիմէոս եպիսկոպոս Գէորգեանի փոր-  
ձը՝ զԽորենացի թարգմանիչ գտնելու  
այս հին բնագրին, պէտք չկայ շեշտելու,  
անյաջող է, ճիշտ ինչպէս անտեղի է՝ թէ  
և յաճախ կրկնուած՝ զԽորենացի թարգ-

1. Արդարութիւնը պահանջում է վկայել՝ որ հ. Եղիա վարդապետն է եղել Մնացորդաց այդ հնագոյն թարգմանութեան տարբերութիւնը նկատող և ի յայտ բերողը, այլև պրօֆ. Խալաթեանցի ուշադրութիւնը գորայ գարձնողը։

2. Սա յետոյ հրատարակեց. «Բստ իս՝ ապացուցուած է, որ Մնացորդաց Գրքի հնագոյն թարգմանութիւնը կատարել է Խորենացին և շատ ոճեր ու ձեռք այնահետ առնուած են ուղղակի Գողթան երդերից (« կոել—կոփել. համն առնուլ » և այլն). առև « Խորենացին է Մնացորդաց Գրքերի առաջին հայ թարգմանողը Ասորերէնից»։ Տարազ, 1905 թ. № 12—13. Բարդ. եպիսկոպոս Գէորգիան» (« Պատմութիւն Քերականութեան արեւելա-  
հայ լեզուի », եր. 134. Տփիլս, 1906):

մանիչ ըսել Եւսերեայ Քրոնիկոնին, անով որ Խորենացին գիտէ այս գրքերը և կը գործածէ» (Հանդէս ամնօրեայ). 1906, թիւ 1, Յունուար, եր. 4):

Կամի ասել թէ՝ Խորենացին չէ գուրա թարգմանողը, այլ՝ գործ է ածել ուրիշի այդ թարգմանութիւնը:

«Խորենացին է Մնացորդաց այդ Գրքերի առաջին հայ թարգմանողը՝ Գրելուս համար՝ ես նախ քաղել ցուցադրել եմ բառեր, գարձուածներ, նախադասութիւններ և մտքեր, որոնք հասարակաց են միայն այդ թարգմանութեան և Խորենացու Հայոց պատմութեան համար։ Օրինակ. «Ի՞ւ ի՞ւ ի՞ւ զը, զոր Խորենացին առել է վիպական հնագոյն երգից—«կուել կոփել զդուոն երուանդայ արքայի», մտցրել է և՛ իւր Հայոց պատմութեան մէջ և՛ Մնացորդաց Գրքերի ի՞ւ այդ թարգմանութեան մէջ։ Ըստ այսմ և միւսները—եան, եանց հապեան Շահաւորաց, ճառաւ. ունուիլը. նիւզիւանը. իսուր վարեալ. զաշիարհն է հարինի—ընդ հարինի հայուցանելը սպասութեան երաժնոյ գործաւորաց հրաման պալ. ողնջոյ և երիտոյ, իւյուի և ժարի. ճարագարաց ինտափարած սուլյարի յատակացն. ձի իսուրի. ուհամ առնուլ այսն. հասարականութեան սեծեն ու ժերին. սուազնորդ. Ալնելիս. Կայինան Շրբուրտ է նոյէ. Արքահամ ժանելրորդ առաջնորդնահապետ։ Այն ինչ՝ Խորենացուց առաջ համարուած գրողները և կրտսէր թարգմանիչները և ամբողջ Եօթանասնից մեր թարգմանութիւնը,—զոր գիտէ Խորենացին և նոյնու «կը գործածէ»,—չունին դորանք այդպէս եւ, ընդհակառակն, ինչ որ Եօթանասնիցը ունի, օրինակ—իտուարմանիլը, գործուելից՝ բնաւ չունին ոչ Խորենացին և ոչ Մնացորդաց Գրքերի Ասորական բնա-

գրից այդ թարգմանութիւնը։

Հ. Տաշեանի ուշագրութիւնից անշուշտ վրիպում է և այն հանգամանքը՝ որ Հայոց Վիպասանքից մնացած Վարդգէսի երգի համար պահող—մեզ աւանդողն է Խորենացու Հայոց պատմութիւնը<sup>1</sup>, և ոչ թէ Մնացորդաց այդ հնագոյն թարգմանութիւնը կամ մի այլ ոք։ Հետեւաբար, օգտուող բանագաղը՝ Մնացորդաց այդ թարգմանողն է. ի հարկէ այն դէպքում՝ որ եթէ այդ թարգմանողը և յիշեալ պատմութեան հեղինակը շինէր մի և նոյն Խորենացին, հակառակ՝ ինչ որ վկայում են փաստերը և ինչ որ ես համոզուած պնդում եմ։

Հ. Յ. Տաշեանի գծուծ առարկութիւնը նոյնչափ անզօր է շօշափելու այն յօդուածիս աստղանիշով բաժանուած երկրորդ կէսը, ուր ցոյց եմ տուել, որ «Կայինան Շրբուրտ է նոյէ» ասելու համար՝ Խորենացու աղքիւրն էր Ասորական հին բնագրից ի՞ւ այդ թարգմանութիւնը։ Անզօր է շօշափելու, որովհետեւ Խորենացուն ը. Թ-րդ դարերում տեղաւորել ջանացողները անշուշտ գիտեն՝ որ այդ գարերից շատ առաջ, ս. Սահակայ և Մեսրովբայ կենդանութեան օրերից հետէ՝ մեղանում անպայման իշխում էր «սույն օրինակն» Եօթանասնից թարգմանութեան<sup>2</sup>, ուր Կայինան կայ՝ Ա. Դամիշ Շրբուրտ, բայց չնոտ և՛ նոյից յետոյ<sup>3</sup>։

Բառերի և ոճի նոյնութեան մի հարուստ օրինակ ես, յետոյ նկատած։ «Եւ ահաւասիկ գործարարութեան վայտահարիդ ծառայից քոց հրաման պոտատ տալ վսեստակ ցորենոյ քոռոս քսան հազար. . . այր իմաստուն հանճարեղ ի գործս ուկոյ և արծարոյ, է ողնջոյ, յերկարոյ, ի գործ իւյուի և ժարի. . . ի գործ ի՞ւ ի՞ւ ի՞ւ ի քանդակել. . . Եւ հրաման էս Սողոմով

1. «Հատուած զնացեալ Վարդգէս մանուկն ի Ցուհաց զաւառէն, դՔարսահ գետով, եկեալ նստեալ զքրէ բլրով, զԱրտիմէղ քաղաքաւ, դՔարսահ գետով, կոն կոփել զդուոն երուանդայ արքայի» (Խոր. թ. Կե.)։

2. Խորենացի, գ. ԿԱ.

3. Հովհեւ շաբաթաթերթի մէջ (1906, № 7) այսական խոշոր սխալմունք է տեղի ունեցել:

ժողովել զամենայն եկս հարաբերաց» (բ. Մնաց. Բ. 10, 14, 17):

Եօթանասնիցը—«Եւ դուքծնէնցն որք հատանեն զփայտն՝ ի կերակուր ետու հաց՝ ռոճիկ ծառայից քոց՝ քսան հազար քոռ ցորենոյ . . . այր իմաստուն, որ գիտէ զհանճար . . . գիտէ գործել զոսկի և զարծաթ, և զպղինձ, և զերկաթ, և զքարինս և զփայտս . . . և քանդակել զքանդակակս . . . Եւ ժողովեաց Առզոմոն զամենայն արս պանդուխտս յերուսաղէմ» (անդ):

Այսպէս, Եօթանասնիցը ահա թէ տարբեր է և՛ թէ չունի առաջինում ընդգծուած բառերը, բառածերը և ոճը:

Իսկ Խորենացին—«Հրաման պայշ . . . անարուեստից դուշտառաց . . . արուեստաւոր դուշտառաց իւստի և ժարի, պահանջու և էրտեսոյ . . . ի վերայ իւրաքանչիւր գառուց զընտիրս հ հարաբերացն վարդապետս կարգել . . . իւեւ իւեւ զդուուն Երուանդայ արքայի» (Խոր. ա. ԺԶ. բ. ԿԵ.):

Բարեբախտաբար՝ հիմնական երկու պայմաններ ամեն կասկածից վեր են, առաջին՝ Մնացորդաց այդ թարգմանութիւնը «Հայերէն լեզուի ամենահին՝ թէ չասենք՝ անդրանիկ գրուածքներից մէկն է ընդունուելու», և՛ «յայտնապէս մնացորդ մըն է ս. Գրոց նոյն իսկ նախնական թարգմանութենէն յԱսորւոյն»: Իսկ Երուսաղէմի օրինակի յիշատակարանը, ինչպէս տեսանք, Սահակ Պարթևին է ընծայում այդ թարգմանութիւնը: Երկրորդ, այդ թարգմանութեան և Հայոց Խորենացու Հայոց պատմութեան բացարձակ առէրու՝ մտքերի, լեզուի և ոճի, բառերի և բառածերի: Խորենացու քաջամարտիկ հակառակորդները—Տաշեան, Խալաթեան՝ սորանք վկայելուց յետոյ, այժմ այդ թարգմանութիւնը Խորենացունը չհամարողը և ինձ ընդդիմախօսողը՝ պարտաւոր էր նոյնքան համարժէք փաստերով ապացուցանել—նախ՝ թէ Խորենացունը չէ. Երկրորդ՝ թէ հապա-

ռւմը կարող է լինել: «Սուտ Խորենացի» համբաւողների համար՝ փախուստի միակ հնարաւոր ելքը. եթէ սակայն երբէք յաջողին:

Այսողջ մեր Աստուածաշնչի առաջին թարգմանութիւնը Ասորերէնից, այլև յետոյ որբագրութիւնը ըստ Եօթանասնից՝ ս. Սահակայ և Մեսրովբայ և աշակերտաց ոմանց ընծայելով հանդերձ, Մնացորդաց այս թարգմանութիւնը բացարձակ աղաղակում է և բողոքում ինպաստ Խորենացու գատի: Եթէ Եւսեբեայ Քրոնիկոնից, Նազիանզացուց, Սոկրատից, Անանիա Շիրակացուց, և այլն, ասացին թէ օգտուել բանաքաղել է Խորենացին, սակայն գիտենք որ գոքառորդն կան, և կարող էինք առ ժամանակ, —քանի որ Խորենացու ժամանակի խնդիրը գրել էին վէճի տակ,—կարծիքների բաժանուել գրող և ընթերցողներու Օրինակ. պրօֆ. Գր. Խալաթեանց, Կարսիէր՝ կը պնդեն թէ Խորենացին բանաքաղել է Սոկրատի հայերէն յետնագոյն թարգմանութիւնից, կամ Անանիա Շիրակացուց. իսկ ուրիշներ, ընդհակառակը, ինչպէս Նորայր Ն. Բիւզանդացին, կը պատասխանեն թէ՝ վերջիններն են բանաքաղել Խորենացուց: Բայց Մնացորդաց Գրքերի՝ Ասորերէնից այս հնագոյն թարգմանութեան վերայ Խորենացու իրաւանց այդպիսի մի բաժանորդ՝ զայլ ոք անուանել չենք կարող: Մեր ժամանակի զարգացման հասած իրաւագիտութիւնը—ուրեմն հասուն բանականութիւնը՝ թելագրում է, որ իրաւունքի կամ սեպհականութեան մասին պահանջյարուցանողը ինքը պարտաւոր է ներկայացնել ապացոյց, դօկումէնտ: Իմ յօդուածով Խորենացին արդէն աւտեան հանեց իշեն Թայն առանցնայապատճեն բառերի, ոճի, խօսքի և մտքի նմոյշներ, իսկական դօկումէնտներ, որ Մնացորդաց Գրքերի այս հնագոյն և «անդրանիկ» հայ թարգմանութիւնը՝ ի-ը սեպ-

հայան չափով էլ առ է Հարիւրաւոր Տաշեաններ անզօր են այլ ևս խեղաթիւրել փաստերը և ժխտել Խորենացու իրաւունքը<sup>1</sup>։

Ոչինչ չի արգելում սակայն ընդունել՝ որ Խորենացին մինչև իւր կեանքի վերջը յաւելումներ է արել նոյնպիսի յաւելումներ և յապաւումներ արել են և զանազան ժամանակներում արտադրող և «Արբազրողները», ինչպէս խոստովանում է ընտրելագոյն կարծեցրուած Լամբրոնացու օրինակից արտագրութեան ստացիչ «պիտականուն Մովսէսը»։

Խորենացին ո, Սահակ Պարթեկի (աւենազպիրը) «Գլուխ» էր և Աստուածաշնչի Ասորերէնից թարգմանութեան առաջ գլուխական ։—Խորենացու Հայոց պատմութիւնը, այլև «Ողբը» գրուած են Վարդանանց պատերազմից ոչ յետոյ, երբ Խորենացին ողբում—աղաղակում էր. «Անտիռքոս ըռնադատէ թողուլ զօրէնս հայրենիս, և Մատաթիայ ոչ ընդդիմակայէ, պատերազմ զմեղ շուրջ պատեաց, և Մակարէ ոչ փրկէ։ Այժմ մարտք իներքուստ և արհաւիրք արտաքուստ.

արհաւիրք ի հեթանոսաց և մարտք ի հերձուածողաց, և խորհրդականն չէ ի միջի՝ որ խրատէր և յարմարէր ի պատերազմ։ Աւազ զրկանացս . . . Եւ ոչ գիտեմ, եթէ զիանց յարմարեցից զողբերագութիւնս, և կամ զով արտասուեցից։ Զհմըն իմ մանուկ և թագաւոր, զխորհրդակցութեամբ վատթար աղգաւ ի բաց ընկեցիկն . . . յաթոռոյն ի վայր կործանեալ, եթէ զիս ինքն, զի վերացաւ ի գլխոյս փարթամացուցիչ պսակըն գեղեցիկ և կենցազօգուտու։ Զհմըն իմ և Քահանայապետ . . . եթէ զիս . . . Զծնողն իմ աղբիւր վարդապետական . . . եթէ զիս . . . Զաշխարհիս եկեալ աղետու, եթէ զապագայիցն ակնկալութիւն։»; Եւ երբ տակաւին Սահակ Բագրատունին յիրաւի «մանուկ, տհաս, խակ» պատանի էր։

Ըստ այսմ, յետ եմ վերցնում Խորենացու Մեկենասի մասին իմ վազուց, —երբ խարխափում էին Խորենացու ապրած ժամանակի խնդրի շուրջը, —յայտնած կարծիքս<sup>2</sup>, այն՝ որ նախորդ պայմաններում ընտրելագոյնն էր (Հովհաննես, 1906 թ. № 7):

2 Փետրվ. 1906 թ.



1. Աւրիշ առթիւ իրաւամբ նկատել եմ որ չ. Յ. Տաշեանին պակասում է «արդար խոսելու» ցանկութիւն. յաւելացրէք ե՛ստոր արարած չ. Ա—երի թելազրութիւնները։ Տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ», բ. հատոր եր. 16. և «Հանդէս ամսօրեայ», 1903, չոկտ. կազմի երկրորդ եր. պատասխանը Խմբ.։

2. Տես «Խորենացուն Խորենացով պէտք է հասկանալ», առ. հատ. եր. 1—5. և բ. հատ. եր. 1—5:

## ԽՈՐԵՆԱՑԻՆ Ե. ԴԱՐԻ Ս.ՌԱԶԻՆ ՔԱՌՈՐԴԻՑ ՄԱՏԵՆԱԳԻՐ


ԽՈՐԵՆԱՑԻՆ Է ԱՍՏՈՒՄԱՇԱՇՆՉԻ ՄՆԱՑՈՐԴԱՅ ԳՐՔԵՐԻ ԱՌԱԶԻՆ ՀԱՅ  
ԹԱՐԳՄԱՆՈՂԸ ԱՍՈՐԱԿԱՆ ԱՌԱԶԻՆ ԲՆԱԳՐԻՑ—ԹԱՐԳՈՒՄԻՑ:

### III.

Պրօֆեսսօր Դր. Խալաթեանցը 1899 թ. տպագրութեամբ ի լոյս ընծայեց Երուսաղէմի Հայոց ս. Յակովեանց վանքի մի ձեռագիր Աստուածաշնչից ա. բ. Մնացորդաց Գրքերը, բաղդատութեամբ ս. Էջմիածնի մատենադարանի № 183 Ձեռագրի հետ Խնքը պ. Խալաթեանցը իւր Յառաջաբանում կարծիք յայտնեց՝ թէ այդ եղական թարգմանութիւնը կատարուած պիտի լինի Ասորական առաջին բնագրից—Թարգումից, և թէ այդ «թարգմանութիւնը ամենայն հաւանականութեամբ հայերէն լեզուի ամենահին՝ թէ չասենք՝ անդրանիկ գրուածքներից մէկն է ընդունուելու, որ հասել է մեր ձեռքը» եւ Հ. Յ. Տաշեանը, ինչպէս տեսանք, վկայեց թէ՝ «յայտնապէս մնացորդ մըն է ս. Գրոց նոյն իսկ նախնական թարգմանութենէն յԱսորւոյն»։ Իսկ ես գտայ, խոր համոզուած եմ, որ այդ հայ «անդրանիկ» թարգմանութիւնը պատկանում է Մովսէս Խորենացու գրչին։ Հետեւաբար՝ Խորենացին ե. դարի առաջին քառորդում ս. Ասհակ Պարթևի «Գլուխ» էր և Աստուածաշնչի առաջին հայ թարգմանութեան առաջ Գլուխիցը։

Ինչպէս յայտնի է, նախնական հայ թարգմանութիւնից միայն Մնացորդաց Գրքերի այդ երկու ամբողջ օրինակն էր գտնուած, մին Երուսաղէմի Հայոց վանքում և մին ս. Էջմիածնի մատենադա-

րանում, եւ պրօֆ. Խալաթեանցը գրում է. «աչքից եմ անցրել ես այնուհետեւ Մայր Աթոռում գտնուած Աստուածաշնչի գրչագիր օրինակները (թուով երեսնից աւելի), բայց և ոչ մէկի մէջ չեմ նկատել այս նորագիւտ թարգմանութեան հետքերը» (Յառաջաբան, էջ Բ.)։ Բայց ես մեր Մայր Աթոռուի նոյն մատենադարանի ձեռագիր քոլոր Աստուածաշնչները հետազօտելով՝ գտայ այդ թարգմանութեան և մի երրորդ օրինակ, № 181, որը նոյն Ասորականից թարգմանուած լինելով հանդերձ, թէպէտ ոչ խսպառ ազատ մնացած Եօթանասնից ազգեցութիւնից, աւելի հնագունի նըշաններն ունի, նման Երուսաղէմի Զեւսագրին. օրինակ—«Եղիազար որդի Ռուգիա հաւը եղբաւը նորուն», Զունի նախադրութիւն, և ոչ կարմրագեղով գլխաբաժանումն՝ ըստ Թուանկաց, և այլն։ Սակայն ափսոսալին այն է՝ որ իմ գտած այս օրինակում ա. Մնացորդաց սկզբի երկու թերթը (գլ. Ա.—Դ. 37) Ասորականից թարգմանութիւն է, ապա գալիս է երկու նոր և տարբեր թուղթ և տարբեր գրիչ՝ (Դ. 38—Բ. 30) ըստ Եօթանասնից թարգմանութեան, ապա գալիս է ձեռալ մի թերթ և մի սիւնակի միայն 44 տողերը (Բ. 31—ԺԱ. 16) Ասորականից է և առաջին գրչով Խսկ այնուհետեւ անընդհատ մինչեւ վերջը՝ շարու-



նակւում է ըստ Եօթանասնից թարգմանութեան։ Ինձ համար անբացատրելի մնաց երկու տարբեր բնագիրների և տարբեր գրիչների այսօրինակ ընդլաւունումը։ Զեռագիրը (№ 181) գլուած է 242=1317 թուին։ Վերակազմել են 1615 թուին։

Իմ քաղած և ցուցադրած այն կտորներից (տես եր, 4—8, 14—15), որոնք, ասացի, հասարակուց են Խորենացու Հայոց պատմութեան և Մնացորդաց Գրքերի Ասորական առաջին բնագրից այս հայ թարգմանութեան համար ճշացն, իմ գլուած այս երրորդ օրինակ Զեռագրում գտնելում են երեքը—«Սափատիա յԱրիտանէանց»—«Ծննդագրեցան և կան ի ճապէանս Շափառունէան Խորայէլացւոց և Յուղայ»—«Խաւսել սկսաւ Շաւուզ ընդ վինուին իւրում»—«Իրեւ ետես վինուին թէ մեռաւ Շաւուզ» (ա. Մնաց. Պ. 3. Թ. 1. Ժ. 4, 5): Բացի այն՝ որ Աւելնիայի և կայնանի մասին նոյն է ինչ որ առաջին երկու Զեռագիրները։ Սակայն «առաջնորդ» բառի տեղ (ա. Մնաց. Ա. 50—54) ունի իշխան, ըստ Եօթանասնից, նման Խալաթեանցի բաղդատած էջմիածնի № 183 Զեռագրին, Միւսները չկան, որովհետեւ, ինչպէս ասացի, սուրանում փոխւում են բնագիրները։ Բայց կայ սորանում, ինչպէս միայն և՛ առաջին երկու Զեռագիրներում, մի այլ եղական տարբերութիւն ես, որի վերայ յետոյ ուշը գարձրի և գարձնում եմ այժմ ուրիշների ուշադրութիւնը։

Ութան. այն տեղի անունն է, ուր 1871 թուին նապօլէօն Գ. Ֆրանսո—Բրուսական պատերազմում իւր հետ հարիւր հազարանոց բանակով գերի ընկաւ Գերմանացւոց ձեռքը։ Հանրագիտակ և այլ բառարանները չգիտեն ուրիշ

Սէդան անուն։ Սակայն Ասորական առաջին բնագրից այս հայ թարգմանութեան մէջ գտնելում է, երեք Զեռագիրներումն էլ միակերպ, Սէդան անունը — «Եղիազար որդի Ռոդիա հաւր եղբաւր նորուն, և սա էր յերից անտի՝ հզաւր, որ ընդ Դաւթին իսկ էր չ Սէդան» (ա. Մնաց. ԺԱ. 12—13)։

Հայերէն և օտար լեզուներով Եօթանասնից թարգմանութիւնները Սէդանի տեղ ունին—Հայերէնը՝ «ի Փասասողոմին», կամ՝ «ի Փասասոսողոմին», Ֆրանսերէնը՝ «à Pasdammin». իսկ Եբրայեցերէնը՝ «յԱփիոդոմին»։

Ո՞րտեղից է գալիս այս Սէդան անունը, ինչ նշանակութիւն պիտի ունենայ Ասորական առաջին բնագրի և նորանից մեր հայ թարգմանութեան խընդիրներում։ Ինչ ծառայութիւն կարող է մատուցանել Պաղեստինի աշխարհագրութեան և Պաղեստինագէտներին, — մնում է Եբրայական և Ասորական հին աղբիւրները ուսումնասիրողներին բացատրել<sup>1</sup>։

Իմ հետազօտութիւնը տուեց, բացի վերոգրեալներից, և մի այլ արդիւնք՝ Մեր ս. էջմիածնի մատենագարանի ձեռագիր Աստուածաշունչներից տասն եւ հինգ հատը—№, № 163, 167, 168, 169, 170, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 192 և (Գէորգեան ցուցակ, №) 18—ունին հետեւեալ ընթերցուածը։ «Եւ Արփաքսագ ձնաւ վկայնան և կայնան ժնաւ զՍազա...» (Ծննդ. Ժ. 24): Այն ինչ Զոհրաբեանին յայտնի էր եղել, ինչպէս տեսանք, միայն «երկու օրինակ եւ ելթ» Զեռագիրներ, որոնք ունեցել են «կայնան» և «կայնան ժնաւ» բառերը նոյն տեղում։ Սակայն նոյն Ծննդոց ԺԱ. 12

1. Կայ Սեղան, Ապառաժ Արաբիայի քաղաք, մօտ ի Պաղեստին։ Cédar, v. de l'Arabie Déserte, près de la Palestine (Diction. Larousse):

տնահամարում՝ ոչ մի Զեռագիր չունի Կայունն, այլ Արփաքսադից յետոյ գալիս է Սաղը. «Եւ Արփաքսադ եկեաց ամս ձև, և ծնաւ զԱպա . . .»:

Մնացորդաց Գրքում կրկնում է նոյի երեք որդոց ազգաբանութիւնը. Մեր մատենագարանի Զեռագիրներից երեսուն եւ երկու հատը—№, № 153, 155, 156, 157, 159, 161, 162, 164, 165, 166, 167, 168, 169, 170, 171, 172, 173, 174, 175, 176, 177, 178, 179, 180, 181, 182, 183, 184, 185 և (Գէորգեան ցուցակ, №, №) 16, 17, 18—ունին. «Եւ Արփաքսադ ծնաւ զԿայունն. Լ Կայունն ծնաւ զԱպա . . .» Որդիք Սեմայ Ելամ և Ասուր. և Արփաքսադ, Կայունն, Սաղա . . .» (ա. Մնաց. Ա. 18, 24). Բայց պէտք է ծանօթացնեմ, որ այս Զեռագիրներից ոմանք մի կամ միւս տեղում, օրինակ № 153՝ Կայունն ունի տողամիջում. № 155՝ լուսանցում. № 157՝ փակադում: Իսկ №, № 157, 162, 175 և 185՝ վերջին տնահամարում (24) չունին Կայունն: Կան և այլ Զեռագիրներ՝ որոնք լրիւ չեն. կայ և այնպիսին, որից թերթեր են ընկած:

Ուրեմն չկայ և ոչ մի հատ հայ Զեռագիր,—հաւանական է թէ և ուրիշ մատենագարաններում,—հարկաւ և ոչ մի տպագիր՝ որ Կայունն մասին համաձայն լինէր Նօթանասնից բնագրին, Երայականին կամ Վուլգաթային. որոնցում Արփաքսադից յետոյ պակասելով Կայնան՝ Աբրահամ՝ +ուներուր նահապետ է, այլ ոչ թէ «+ուներուր սուտ շներուր»:

Որովհետեւ ամբողջ այս շարադրութեանս խորհուրդն է ցոյց տալ Մովսէս Խորենացու ապրածիւն նորաջայոց պատմութեան գրութեան ժամանակը, իրբեկնիք բանիս՝ դնում եմ այստեղ յիշեալ պատմութեան հետեւեալ ուշագրաւ մի հատուածը, որը ինձ թւում է թէ պիտի Պարսից Վուամ երկրորդի (Ե.), —որը մահացու հարուածով «զքէն վրիժուց խնդրեաց ի մերմէ աշխարհէս» (Խոր. գ. ԾԶ.). բառնալով Հայոց թագաւորութիւնը, —թագաւորութեան (421—442) տարիներում գրուած լինի, երբ Խորենացին օտարութիւնից նոր էր վերագրածել հայրենիք, կամ թէ, աւելի հաւանական է՝ որ հէնց այն օտարութեան մէջ գրած էր: Ահա այն հատուածը.—

«Եւ գունդս և պահապանս դրան արքունի պատրաստէ (Վազարչակ) զնորսը, զմի մի իւրաքանչիւր վառելովք ի նոյն հին զարմից թագաւորացն՝ որ ի Հայկայ, որ ընդ ժամանակս ժամանակս ժառանգութեան ի հարանց ստացեալ գեւզս և դաստակերտս: Իսկ աստուրեմն Պարսից նախասրանեանն, որ ունի լուծ, յայլաց յանոցնեալ գունդու և սապան անուանել. ոչ գիտէ թէ վասն սպառելոյ ազգին առաջնոյ, թէ վասն ընդդիմութեան իրիք լինելոյ շկահեալ և իրաց ընկեցեալ զազդն, զայլս ի տեղի նոցա յարուցին գունդս անուամբ արքունիւ Այլ առաջինն հաստատ ի զարմից թագաւորացն առաջնոց. որպէս և այժմ ի Վրաց աշխարհին, որ Սեպծուղն՝ կոչի» (Խոր. բ. է.):

1. Վրաց լեզում հայերէն շատ բառեր կան: Սեփետուղ. Լամբռնացու կոչուած օրինակում՝ Սեփէժալ: Մկրտիչ էմինը կարգացել է նոյնպէս՝ Սեփէծուլ: Նորայը ն. Բիկանդացին և Լանգլուան՝ կարգացել են Սեփէծուլ: Նշանակութիւնը—Սեփէ կամ Մեփէ՝ Վրացերէն նշանակում է թագաւոր. ծուլի՝ զարմ=թագաւորազարմ: չին Պարսկերէն՝ ուսան: Հայերէն՝ Խորենացին ահա կոչում է «զունի արքունի», ուրիշ տեղ (գ. Լէ.)—«դրամիկ»: Իսկ Բուլանդ, Ագաթանգելոս, Փարպեցին՝ կոչում են «ազատազունի»: Արդ, ըստ Խորենացու՝ չորս զունդեր կազմելու համար, թող հէնց շափազանցօրէն զրուած լինի, թագաւորազունք ճարել անհնարին էր: Ազատազունդը, հեծեալ, կազմում էր Հայոց ազատանիներից և սեպահներից (սեպհականատէր—կալուածատէր), որոնք ունին «ի հարանց լսացեալ գեւզս և դաստակերտս»:—Ենթագրում եմ, որ Վրացական սեփետուղ՝ մեր սեպուն Քայազնեալ գունդ,

Այս հատուածի մէջ ամենակարևորը և ուշադրութեան արժանին է երկու բառ—«որդէս լսէմ»։ Սա ցոյց է տալիս՝ որ «աստ ուրեմն Պարսից թագաւորութեանն, որդէս լսէմ, յայլոց յարուցեալ գունդս և ոստան անուանելու ակտը՝ ամենաշատը մի տարով հազիւ առաջ կարող էր կատարուած լինել Խորենացու այս տողերի գրուելու օրից, այլապէս՝ աւելի քան անտեղի պիտի լինէր գրել—«որդէս լսէմ»։ Զեմ կարծում թէ մի ոք, «ի միտս ունողաց», առանց խղճի խայթ զգալու կամ առանց յետին մըտքերի՝ համարձակուի ասել թէ՝ կեղծում է Խորենացին։

Ամփոփումն և ընդհանուր եզրակացութիւնն.—ի նկատի առնելով, ա) Որ՝ Մովսէս Խորենացու Հայոց պատմութիւնը հեղինակի լրջութեան և անկեղծութեան դրոշմն է կրում։ բ) Որ՝ Խորենացու և նորա Հայոց պատմութեան վերաբերութեամբ վստահութիւն և հաւատը մեծ է եղել և աներկբայելի՝ մինչև մեր օրերը։ գ) Որ՝ նոյն վստահելի Խորենացին է ասում, բացի հիների վկայութիւնները, թէ ինքը ու Սահակայ և Մեսրովբայ աշակերտ էր։ դ) Որ՝ յայտնում է, թէ ինքը էր «ծերացիւալ և հիւանդուս և անպարապ ի թարդմանութեանց», մինչ իւր մեկենաս Սահակ Բագրատու-

նին՝ պակատին «մանուկ, տհաս, խակ» պատանին ե) Որ՝ Ղազար Փարպեցին առ Վահան Մամիկոնեանը գրած թղթի մէջ արգահատօք յիշում է «Մովսէս փիլիսոփոս աին՝ իրրեւ որդէն վախճանած» զ) Որ՝ պատմական աւանդութիւնը վկայում է, թէ Մովսէս Խորենացին ու Սահակ Պարթևի «գրիւը—ատենադպիրն էր» է) Որ՝ Ասորական բնագրից Աստուածաշնչի հայերէն թարդմանութիւնը կատարուել է Մեսրովբեան կոչուած հայկական տառերի գիւտից (406 թ.) անմիջապէս յետոյց ը) Որ՝ արդէն ապացուցած եմ համարում, թէ Խորենացու գրչին է պատկանում Մնացորդաց Գրգերի առաջին հայ թարդմանութիւնը Ասորական առաջին բնագրից—Թարդումից։ թ) Որ՝ Խորենացին գրում է, ի հարկէ իւր սե օրերում կատարուած անցքի մասին, թէ «որդէս լսէմ... ու գիտէմ»։ ժ) Որ, միւս կողմից, Խորենացու դէմ առարկութիւնները՝ առհասարակ են նաև ունենալու են եղած, ի հարկէ թիւրիմացութեանց արդիւնք Հետեւում է, ուր եմն, որ՝

Մովսէս Խորենացին Ե-րդ դարի առաջին տարբերից արդէն հաստան մասենագիր էր, հակառակ պրօֆ. Կարրիէրի, Խալաթեանցի, Տաշեանի, և այլոց յարուցած կասկածանների և պնդուների իւհ նոր Հայոց պատմութեանը և Ուլը՝ գրուած Վարդանանց պատերազմից (451) ու յետոյ։

Բարդուղիմէոս եպիսկոպոս Գէորգեան (Ճուղուրեանց),

Վաղարշապատցի.

Վ թ ի պ ա կ ի ք

եր.	տող.	սխալ.	ուղիղ.
3.	30.	ոչ լինելոյ Յունի »	յոչ լինելոյ Յունի »
8.	2.	երկրիս այսորիկ »	զերկրիս այսորիկ »
10.	7.	միւսները՝ լքել	միւսներինը՝ լքել
,,	25.	մինև ցարայն	մինչև ցԱրայն
,,	29.	Արիւզինոս յիւրում	Արիւզենոս յիւրում

ԲԱՐԴ. ԵՊԻՄԿ. Գ. ՃՈՒՂՅՈՒՐԵԱՆՑԻ

	Բ.	Կ.
ա) Խորենացուն Խորենացիվ պէտք է հասկանալ, Ա. հատ.	. . —	50
բ) Խորենացուն Խորենացիվ պէտք է հասկանալ, Բ. հատ.	. . 1 —	
գ) Վաղարշապատը եւ Ս. Էջմիածինը իրենց սկզբնական տեղումն են .	—	20
դ) Ծշմարտութիւնը չի մեռնում:	. . . . . . —	50
ե) Խորենացին Ե. ղարի առաջին քառորդից մատենագիր.	. . —	40

Գումարով գնողներին 25% զիջումով: